

ԶԱՅՆ

ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

ՅՈՒՐԹԱՍ

Ավելի քան մեկ ամիս է մամուլում ու հեռուստատեսությունում անդրադարձվում են Վերին Լարսի փակված անցակետում կուտակված Հայաստան եկող հազարավոր մեքենաների խնդրին: Այս առիթը դարձավ, որ հիշեի երկու տասնամյակ առաջ կարդացած Մարտիրոս Սարյանի «Գրառումներ իմ կյանքից» հուշագրությունից մի հատված, ուր հիշատակվում է Լարսի անցակետը: Այն ժամանակ Լարսում ինգուլզները ուղեւորների խմբից առանձնացնում էր ձերբակալում էին հայերին: Երեսուներեքամյա Մարտիրոս Սարյանի կյանքը փրկողը նույնպես ինգուլզ էր: Թե այդ խառնակ տարիներին որքան հայ է մորթվել Հյուսիսային Կովկասի ճանապարհներին, անհայտ է: Խորհրդային պատմագրությունը մնամ թեմաների չէր անդրադարձնում եւ, գուցե, դա է պատճառներից մեկը, որ մենք այդպես էլ չենք ճանաչում Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին, որոնց հետ ապրում ենք՝ երբեմն նաեւ վտանգելով մեր կյանքը, այլապես, գուցե մեր հայրենակիցների մի մասը մինչեւ Չեչենա-Ինգուլզեթիայում բնակություն հաստատելը մտածեր հնա-

րավոր հետեւանքների մասին: Արդեն մեկ տասնամյակից ավելի է ձգվում պատերազմը Չեչենիայում, բայց մենք չգիտենք, թե որքան հայ է տնագուրկ դարձել, որքանը՝ զոհվել: Սա Չեչենիայում, իսկ Հյուսիսային Կովկասի մյուս հանրապետություններում, ուր տեղական ժողովուրդների հետ ահաբեկչության եւ պայթյունների զոհ են դառնում նաեւ մեր հայրենակիցները, անկախ նրանից՝ մշտապես բնակիչ են, թե՛ վերջին տարիներս են բնակություն հաստատել:

Բնալայնյան ողբերգությունը բոլորիս ցնցեց, նաեւ զարմացրեց, որ Հյուսիսային Օսիայի մինչ այդ շատերին բացարձակապես անհայտ այդ փոքրիկ քաղաքում եւս զգալի թվով հայեր են ապրում՝ մի մասը Հայաստանից նոր արտագաղթած, եւ նրանց մեջ՝ շուրջ տասը անմեղ զոհ: Աստված մի արասցե, որ Հյուսիսային Կովկասում ազգամիջյան պատերազմ բռնկվի, այնժամ «յո՛ւ երթաս» հարցի հարցական նշանը յաթաղանի կորության կննանվի: Յո՛ւ երթաս...

ՍԵՐԳԵՅ ՎԱՐՄԱՆՅԱՆ

«1918թ. փետրվարի 20-ին Ռազմավարական ճանապարհով մեկնեցի Վլադիկավկազ: Ամբողջ ուղին կտրեցիք բեռնատար ավտոմեքենայով:

րում էլ ավելի էր մեծանում հարազատներին հետ լինելու ցանկությունը:



Շունչս պահած սպասում էի, թե վերջն ինչ է լինելու: Նման էի այն լողորդին, որը մեծ ալիքի բերանն է ընկել և հնարավորություն չունի ոչ վերադառնալու, ու ոչ էլ դիմացի ավիին հասնելու և սպասում է մոտալուտ մահվան ...

Երբ Թիֆլիսից դուրս եկանք, մտածում էի, որ ճանապարհը հեշտ կանցնենք: Միայնակ էի: Քաղաքից ոչ հեռու հանդիպեցինք մարդկանցով լի ավտոմեքենաների: Նրանք հայտնեցին, որ Վլադիկավկազում ինգուլզները ձերբակալում են հայերին և ռուս կազակներին: Ես միակ հայն էի մեր մեքենայում: Մյուսները վրացիներ էին: Ուղեկիցներս հույս էին տալիս՝ «Հանգիստ եղեք, ոչինչ չի լինի»: Բնականաբար շատ էի հուզվում, և այդ խոսքերն ինձ քիչ էին մխիթարում: Ի՞նչ ասես որ չէր կարող պատահել այդ խառն ժամանակներում: Մարդկային կյանքը գորշի արժեք չունեւր ավազակների համար:

Արագ ընթացքով մոտեցանք Լարսին:

Մեզ դիմավորեցին ինգուլզական ուղեկալի հրացանակիր զինվորները: Նրանց պետն արտաքինով ինտելիգենտ մարդ էր: Բոլորին մեկ առ մեկ սկսեց բնմել: Հերթը հասավ ինձ: Մեր ավտոմեքենային խնդրեցի նրան հայտնել, որ ես հայ եմ, ու, ուկազնեց, ինգուլզները մոռացան մեզ և մոտեցան նրանց: Թե ինչ եղավ խեղճ կազակների հետ, չիմացանք: Շարունակեցինք ճանապարհը, բայց վտանգն ինձ համար դեռ չէր վերջացել: Ամեն ինչ առջևում էր, որովհետև ինգուլզների հիմնական ուղեկալը գտնվում էր Վլադիկավկազից ոչ հեռու ...

Ռուս սահմանապահները ճանապարհին վերցնում էին ուղևորների մոտ եղած զենքերը: Տպավորությունն այնպիսին էր, կարծես թե մենք ընթանում էինք պատերազմական թունդ գործողությունների միջով: Մեր մեքենայի ծայրը ստեպ-ստեպ խլանում էր այստեղից-այնտեղից լսվող կրակոցներից ...

Երեկոյան հասանք Կազբեկ կայարանը, ուր պետք է գիշերեցինք: Իսկ առավոտյան լինելու էինք Լարսում, որտեղից սկսվում էր ինգուլզների «խշխառությունը»: Մտածում էի՝ մնա՛լ, թե վերադառնալ: Որոշեցի վերադառնալ: Բայց ինչպե՞ս, ինչո՞վ: Թիֆլիս գնացող միայն մի մեքենա հանդիպեց, այն էլ այնքան լիքը, որ կանգնելու տեղ անգամ չկար: Ստիպված էի մնալ: Իսկ ուղեկիցներս անընդհատ հանգստացնում էին՝ «Ոչինչ չի լինի»: Բայց ի՞նչ: Ի՞նչ կապ կար այդ մարդկանց բարի կամեցողության և ավազակների միջև, որոնք կարող էին իջեցնել ինձ մեքենայից և առանց աչք թարթելու այն աշխարհն ուղարկել:

Մեր ետևից կազակներով լի մի մեքենա էր գալիս: Երբ հասավ ուղեկալին ու կանգնեց, ինգուլզները մոռացան մեզ և մոտեցան նրանց: Թե ինչ եղավ խեղճ կազակների հետ, չիմացանք: Շարունակեցինք ճանապարհը, բայց վտանգն ինձ համար դեռ չէր վերջացել: Ամեն ինչ առջևում էր, որովհետև ինգուլզների հիմնական ուղեկալը գտնվում էր Վլադիկավկազից ոչ հեռու ...

Հասանք: Չիավորված խումբը կանգնեցրեց մեզ ու մի ակնթարթում շրջապատեց: Նրանց գլխավորը ուշի-ուշով սկսեց զննել, ապա հարցրեց՝ «Հայեր չկա՞ն ձեր մեջ»: Նախորդ ուղեկալի ինգուլզ պետը շուտ եկավ դեպի մա ու կտրուկ պատասխանեց՝ ո՛չ»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
Գրառումներ իմ կյանքից, Երևան, 1980, էջ 246-248

Վերջերս Հայաստանում էր գտնվում Աբխազիայի հերոս, Աբխազիայի խորհրդարանի պատգամավոր, Աբխազիայի թոշակային ֆոնդի վարչության նախագահ, «Աբխազիայի Հանրապետության հայկական համայնք» ՀԿ համանախագահ Գալուստ Տրապիզոնյանը, որին խնդրեցինք պատմել իր մասին եւ պատասխանել մի քանի հարցերի:

- Ծնվել եմ Գագրայում 1958թ.: Նախնիներս, ինչպես ազգանունս է ասում, տրապիզոնցի էին: Գագրայի էս. Աբովյանի անվան դպրո-



ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆԷ ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ցում սովորել եմ մինչև 8-րդ դասարան, հետո գնացել եմ ռուսական դպրոց, բայց իմ երեխաներին հայկական կրթություն եմ տվել. ունեն երկու տղա, մեծը ավարտել է էս. Աբովյանի անվան դպրոցը, փոքրը սովորում է 4-րդ դասարանում: Ընտանիքս ապրում է Գագրայում, ես ամեն օր Գագրայից գնում եմ Սուխում՝ աշխատանքի: Մանկուց սիրում էի ֆուտբոլ խաղալ, Գագրայում մարզվող «Արարատի» և «Շիրակի» ֆուտբոլիստների հետ շատ էի խաղում: Ինձ և ընկերներիս գովում էին, հորդորում, որ ֆուտբոլիստ դառնանք և դպրոցն ավարտելուց հետո՝ 1975թ., երեք հայ տղաներով եկանք Հայաստան՝ ընդունվելու ֆիզկուլտիստիստուտ: Անցկացվեց ինչ-որ փորձնական խաղ: Երբ երկու կողմից խաղում են 50 հոգի, բնական է, որ չես կարող ցուցադրել քո կարողությունները, հնարավոր է, որ նույնիսկ գնդակին հարվածելու հերթը չհասնի: Մեզ հարցրեցին. «Ի՞նչով եք եկել», պատասխանեցինք՝ գնացքով, ասացին. «Դե՛, գնացքով էլ հետ գնացեք»: Այդպես էլ արեցինք:

- Եվ ի՞նչ ֆուտբոլը թողեցի՞ք ...

- Ո՛չ, բանակում՝ Յարոսլավլում, ֆուտբոլ էի խաղում, հետո Լուզանսկում ընդունվեցի ֆիզկուլտիստիստուտ, 1981-82թթ. Լուզանսկում խաղում էի «Ձարյա» ակումբում, որը առաջին լիգայում էր, խաղացի նաև «Ստախանովեց» թիմում, այնուհետև ստեղծել էի աշխատում մանկական մարզահամալիրում: 1991-ին վերադարձա Աբխազիա, ամուսնացա Գանթիպիցից հայ աղջկա հետ, մեկ տարի ֆիզկուլտուրայի ուսուցիչ աշխատեցի իմ հարազատ էս. Աբովյանի անվան դպրոցում, իսկ 1992-ին սկսվեց պատերազմը:

րայի 600 տնտեսությունից մնացել է 140-ը: - Ցավոք, նույն տարիներին Լեռնային Ղարաբաղում ևս կենաց-մահու պայքար էր մղվում և հայաստանցիների գերակշիռ մասը այդպես էլ անտեղյակ մնաց Աբխազիայի հայկական գյուղերի ողբերգությանը: Պատերազմից հետո Դուք երկու անգամ ընտրվեցիք Աբխազիայի խորհրդարանի պատգամավոր, նշանակվեցիք բարձր պաշտոնների: Խնդրում եմ պատմեք այդ մասին:

- 1994-95թթ. աշխատեցի Աբխազիայի կրթության փոխնախարար, հետո մեկ տարի՝ թոշակային ֆոնդի նախագահ, 1996-ին մասնակցեցի խորհրդարանի ընտրություն-

ներին և ընտրվեցի պատգամավոր: Աբխազիայի խորհրդարանի 35 անդամներից 3-ը հայ է, 3-ը՝ ռուս, 3-ը՝ վրացի: Երկու տարի է խորհրդարանի սոցիալական քաղաքականության կոմիտեի նախագահն եմ: 1998-ից աշխատում եմ թոշակային ֆոնդի վարչության նախագահ (1999-ին ավարտեցի նաև Աբխազական պետական համալսարանի իրավաբանական բաժինը):

- Դուք Աբխազիայի միա՞կ հայ բարձրաստիճան պաշտոնյա եք:

- Ո՛չ, պատերազմից հետո փոխվարչապետը հայ էր, խորհրդարանի փոխստանալը հայ էր, 4 նախարարների տեղակալներ՝ գյուղատնտեսության, կրթության, առևտրի, սոցիալական ապահովության, հայ էին: Վերջին տարիներս կառավարման համակարգում հայերի թիվը նվազել է, այժմ պետական առևտրի տեսչության պետը Մելիք Քերեսյանն է, գյուղատնտեսության փոխնախարարը ևս հայ է, էլի հայ պաշտոնյաներ կան, բայց պետք է խոստովանել, որ նրանց թիվը խիստ անհամամասնական է հայ բնակչության թվի հետ:

- Պարոն Տրապիզոնյան, շուրջ տաս տարի Դուք «Կռունկ» բարեգործական կազմակերպության նախագահն էիք, այս տարի ապրիլին տեղի ունեցավ «Աբխազիայի Հանրապետության հայկական համայնք» ՀԿ հիմնադիր համագումարը, որի ժամանակ Սշակուբային կենտրոնը, «Կռունկը», «Մաշտոցը» միավորվեցին, կազմեցին մեկ կազմակերպություն և Դուք, Մարիետա Թոփչյան և Խաչիկ Մինասյանը ընտրվեցիք նորաստեղծ կազմակերպության համանախագահներ: (Մեր ընթերցողներին տեղեկացնեմ, որ համագումարում ելույթ ունեցան Աբխազիայի փոխնախագահ Վ. Արշբան, խորհրդարանի խոսնակ Ն. Աշրբան, վարչապետ Ռ. Խաչիմբան և այլ բարձրաստիճան հյուրեր): Ի՞նչ մտահոգություններ և ծրագրեր ունեք:

- Մեր մշտական մտահոգության առարկան, իհարկե, հայկական դպրոցն է, որը ծանր օրեր է ապրում: Պատերազմից առաջ ունեինք 53 հայկական դպրոց, այժմ՝ 35: Խիստ նվազել է նաև աշակերտների թիվը: Աբխազիայում չունենք հայկական եկեղեցիներ, 1994-ին Գագրայում կառուցել ենք մատուռ, բայց չունենք հոգևորական: Այժմ փորձում ենք տարածք ստանալ Սուխումում և եկեղեցի կառուցել: Շատ ենք կարևորում Հայաստանի հեռուստատեսությունը դիտելու հնարավորության ստեղծումը: Դրա համար անհրաժեշտ է Սուխումի հեռուստաաշխարհի վրա որոշ սարքավորումներ ավելացնել: Ծրագրեր շատ կան, բայց գոնե նշվածները մոտ ապագայում կարողանանք իրագործել:

Զրույցը վարեց Ս. ՎԱՐՄԱՆՅԱՆԸ



Արսեն Հակոբյանը ծնվել է 1976թ. Երևանում: 1999թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 2002թ.՝ ասպիրանտուրան: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Թաթախոս հայեր (պատմագագահական ուսումնասիրություն)» թեմայով: Ավելի քան մեկ տասնյակ գիտական հոդվածների ու զեկուցումների հեղինակ է: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Սիյուռքի հետ համագործակցության ծրագրի ղեկավարն է, «21-րդ դար» հանդեսի պատասխանատու քարտուղարը:

«Քարներ՝ Հայաստանին» - թվում է, թե այս արտահայտությունը արդեն իսկ ձեռք է բերել միօրինակ, կաղապարային նշանակություն հայկական սիյուռքի ցանկացած համայնքում, մանավանդ վերջին փաստանյայտների արագադարձի մեծ ծավալների ֆոնի վրա:

Մակայն Ռուսաստանի Դաշնության Սրբավրայի երկրամասի Եղեխիա (պաշտոնապես՝ Էղիսիա) գյուղի բնակիչ 80-ամյա Սարգիս Թեմիրխանյանի դեպքում այս խոսքերը առանձնահատուկ երանգ ու իմաստ են ստանում: Մեր գրույցի վերջում նա հասցես խնդրեց, որպեսզի մերթընդմեջ հայերենով ինձ նամակ գրի, իսկ ընթացքում էլ հպանցիկ «բողոքեց», որ գյուղում Ղարաբաղից փախստական իրենց հարևանին է մեկ-մեկ կանչում, որպեսզի հեղուկ հայոց լեզվով խոսի, չնոռանա: Իսկ ուրստուն անց Բենիկ Սարգսյանը գրական հայերենով պատմում էր իրենց գյուղի սովորույթների, առանձնահատուկ լեզվի մասին: Իսկ գրուցակիցներիցս մեկն էլ հուզված նկատեց. «Կարո՞ղ եմ հայերենին »:



Մեկ շաբաթ անցկացնելով հայկական այս գյուղում, հանդիպելով, գրուցելով շարերի հետ՝ մեր բոլոր խոսակցություններն ավարտվում էին եղեխացիների՝ մեզ ուղղված պահանջ-ուղերով. «Քարներ փարեք Հայաստանին »: Իսկ դրա խորքում հայության այս հատվածի՝ ավելի քան մեկ ու կես հազարամյակ պատմության քառուղիներում ազգային ինքնության պահպանման ծանր ու դժվարին մաքսամուն է, որն ընդգծված կարևորություն ու արժեք է հաղորդում այս խոսքերին: Միգրացի մեր նյութապաշար ու գուրբալիզացիոն ժամանակներում հենց այս բեկորների մեջ պնդեք է փնտրել ու հասկանալ «ազգային ոգի», «հայրենասիրություն», «մայրենի լեզու» և մյուս հասկացությունների իրական իմաստն ու արժեքները:

2004թ. օգոստոսյան մի շոգ օր էս ու ընկերս՝ իրանագետ Տորք Դալայանը, անցնելով Վլադիկավկազ, Մոզդոկ քաղաքները, ճանապարհին հաղթահարելով մեր ժամանակների



Եղեխացիներ

նակներին բնորոշ դժվարություններն ու խոչընդոտները, ենթարկվելով զանազան ստուգումների ու քաջքուկների, վերջապես հասանք մեր գիտաբանի նպատակակետին և Մոզդոկում նստած փաթեխն մեզ բերեց ՌԳ Սրբավրայի երկրամասի Եղեխիա հայկական գյուղը, ուր էս և Տորք Դալայանը դաշտային հեղափոխություն պիտի անցկացնեինք փողի բնակչության լեզվամշակութային խնդիրների վերաբերյալ:

Գյուղի մասին առաջին դիտարկումները սկսվեցին հենց փաթու վարորդի հետ գրույցից: Իմանալով գիտաբանի նպատակը՝ նա դժգոհեց փարիներ առաջ Եղեխայում իր մասնակցած հարսանիքից: Իր խոսքերով՝ ռուսների նման ուրախանալ չի լինում, փղամարդիկ առանձին են նստում, կանայք՝ առանձին «Տխուր է », - եզրակացրեց նա: «Դե, խոսում են թուրքերեն », - ավելացրեց

ՄԵԿ ՀԱԲԱԹ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՍԻԱ ԳՅՈՒՂՈՒՄ

արդեն բանասացի վերածված մեր վարորդը: Գյուղի պատմությունը դեռևս ասպիրանտական փարիներին բավական ուսումնասիրել էի և արդեն ներքուստ զգում էի, որ ազգագրագետի համար «խոսյան» այս միջավայրը իր մեջ բազում ուշագրավ ու հետաքրքիր երևույթներ է ամփոփել: Սպասելիքներս շար շուրտով արդարացան

Նյուսիսային Կովկասի հայկական համայնքների խճանկարի մեջ իր մշակութային նկարագրով, պատմական բարդ ու հակասական անցյալով առանձնանում է ՌԳ Սրբավրայի երկրամասի Եղեխիա հայկական գյուղը, որը ներկայումս ունի մոտ 6000 բնակիչ: Մեծ թվով եղեխացիներ են ապրում նաև հարևան Կուրսկայա շրջկենտրոնում և այլ բնակավայրերում:

Եղեխիան գտնվում է Կուրա գետի ափին, Մոզդոկից ավելի քան 40 կմ հյուսիս: Գյուղը հիմնվել է 18-րդ դարի վերջին Դաղստանի հարավից և Այսրկովկասի հյուսիս-արևելյան շրջաններից գաղթած հայ բնակչության կողմից, որոնք 1796թ. դեպի Այսրկովկաս Վ. Չուրովի արշավանքից հետո, լքում են իրենց բնակավայրերն ու հեռանում Նյուսիսային Կովկաս՝ հաստատվելով Ղզարում և շրջակայքում, Սբ Խաչ քաղաքում (ներկայիս՝ Բուդյոնովսկ) և Կուրա կամ Կասակա - Յամա վայրում: Պատմական աղբյուրների վկայությամբ՝ այդ ժամանակաշրջանում իրենց բնակավայրերից հեռացան ավելի քան 4000 հայեր:


Նայկական այս խումբը դեռևս վաղ միջնադարից բնակվելով Դերբենտի, Մուշկուրի, Ղուբայի շրջաններում, այլեթնիկ ու այլակրոն միջավայրում՝ ենթարկվել էր լեզվամշակութային փոփոխությունների, կորցրել էր մայրենի լեզուն, դարձել իրանալեզու, և 18-րդ դարում արդեն իսկ հիշարարվում է որպես թաթախոս խումբ: Թուրքերենը, Արևելյան Այսրկովկասում լինելով որպես ազգամիջյան հաղորդակցության լեզու, փարածված էր նաև հայկական այս բնակչության մոտ:

Նյուսիս-արևելյան Այսրկովկասում և Հարավային Դաղստանում հայկական այս խմբի հաստատվելը կապված է դեռևս վաղմիջնադարյան իրողությունների հետ, երբ 6-րդ դարում պարսից Խոսրով Անուշիրվան թագավորը Դերբենտի անցքը պաշտպանելու նպատակով իրանական վերաբնակիչներ է բնակեցնում այդ փարածքներում՝ նրանց հետ միասին նաև «սխառաններին», այսինքն՝ Մյունիքից փոխադրված հայկական զինվորական

բնակչություն:

Մոտ մեկ ու կես հազարամյակ բնակվելով այդ շրջափարածքում, ենթարկվելով լեզվամշակութային ճյուղմաների, կրելով փարածաշրջանում փողի ունեցած զանազան փոփոխությունների առաջ բերած հետևանքները, խումբը պահպանում է հայկական ինքնագիտակցությունը, մշակութային նկարագիրը և դավանանքը:

Ահա այս բնակչության գերակշիռ մասը 18-րդ դարի վերջին հաստատվում է Նյուսիսային Կովկասում: Նրանց մի հարվածը բնակչության վայր է ընտրում Կուրա գետի ափը, որի անունով էլ սկզբնական շրջանում գյուղը կոչվում է Ղուրա: Այն հայրենի էր նաև Դերբենտ, Նայկական գյուղ, Կասակա-Յամա անուններով: 1852թ. գյուղը «ի պարիվ հին Հայաստանի մայրաքաղաքի» անվանակոչվում է Եղեխիա: Ներկայումս Եղեխիայի բնակիչները թր-



Եղեխիայի Սբ Աստվածածին եկեղեցին

բացվել: -Եթե մեր մասին մի բան գրեք, անպայման փողայակ պահեք,- խնդրեց Օլեգը՝ գյուղի գործույթ անհարկներից մեկը: Նա նկատեց, որ 1988թ. հեղուկ եղեխացիների եռանդն ու

քախոս են: Ավելի ճիշտ՝ խոսում են մի լեզվով, որն իրենք պարզապես անվանում են «բիզիմ-չա», այսինքն՝ «մեր լեզվով», «ըստ մեզ»: Կենցաղում գործածում են «բիզիմ-չա», «դր-սի» հետ շփվելիս՝ ռուսերենը: Հայերեն գիտեն հարուկները ծերեր: (Գյուղում գտնվելու ընթացքում նրանք մեր հետ գրույցի էին բռնվում՝ ասելով, որ կարո՞ղ են հայերենը): Գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ խումբը փաստորեն պատմական զարգացումների ընթացքում ենթարկվել է լեզվական ճյուղմաների շարունակական գործընթացների (իրանալեզ-



Բենիկ Սարգսյանը

վություն, թրքալեզվություն): Իսկ իրենք իրենց եղեխացիները կոչում են «կուրայու», այսինքն՝ «ղուրայեցի», «կուրայեցի»:

Գյուղում հանգրվանեցինք Ռուսաստանի հայերի միության փողայակ կազմակերպության ղեկավար Ռաֆայել Գրիգորյանի փախը, որը հենց առաջին օրը մեզ հարսանիքի հրավիրեց՝ Հարսանիքը մի առանձին հնայք ուներ՝ ավանդական նիստակացով, ծեսերով և արարողակարգով՝ հայկական ու կովկասյան մեղեդիներով, պարերով:

Յոթ օր անցկացնելով այս ինքնափողայակ բնակավայրում ու մարդկանց մեջ՝ մեր աշխատանքը ձգվում էր բավական երկար, երբ Ռաֆիկ Գրիգորյանի ընտանիքում, նրա, փիկնոջ՝ փիկին Ժենյայի հետ, մինչև ուշ գիշեր ձգվող գրույցներում մեզ համար հետաքրքիր բացահայտումներ էինք կատարում Եղեխիայի, նրա բնակիչների ու ավանդույթների վերաբերյալ: Ռաֆիկ Վառլամիչը նաև ծխական և դպրոցի հոգաբարձուների խորհուրդների նախագահն է: Աշխատասեյակում՝ սեղանի վրա, հայերենի ինքնուսույց է դրված, իսկ երեկոները արբանյակային պեղծաբանությամբ, միայն թե՛ «հաղորդավարները այնպես արագ են խոսում, որ հասկանալ չի լինում», - դժգոհում է նա:

Ծխական խորհրդի նախաձեռնությամբ փողայակ Սբ Աստվածածին եկեղեցու 90-ամյակի առթիվ այս փարի կրկին վերանորոգվել է եկեղեցին և սեպտեմբերին մեծ շուքով վերա-

կորովը պարզապես դուրս են հորդում Գյուղը, նույնիսկ, իր հիմն ունի:

Եկեղեցական ու դպրության ավանդույթները եղեխացիների համար անցյալից եկել խորը արմատներ ունեն և չափազանց կարևոր դեր են խաղացել համայնքի կյանքում: Առաջին վերաբնակիչների նախաձեռնությամբ 1802թ. գյուղում եկեղեցի է կառուցվել: Ներագայում՝ 1830թ. հին եկեղեցու փոխարեն կառուցվել է նորը, որը սակայն չի դիմացել ժամանակի փոփոխություններին և 1911թ. եղեխացիները սկսել են նոր եկեղեցու շինարարությունը, որը ավարտել են 1914 թվին: Գյուղում բավական հայրենի Վլասյանների փոխը մոտ արհեստագործական հոգևորականներ ու ուսուցիչներ է փոխել համայնքին: Խորհրդային փարինների ճնշումները իրենց հետքն են թողել նաև եկեղեցու և նրա ծառայողների ճակատագրերի վրա: Վերջին քահանան՝ Վլաս Վլասյանը կամ Տեր Խաչատուրը, երկու անգամ ձերբակալվել է, սակայն չի դավաճանել հոգևոր հովվի իր կոչմանը, այդ իսկ պատճառով 1930-ական թթ. վերջերին արտոնվել է Սիբիր, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն: Չնայած խորհրդային ամբողջափրկության բացասական հետևանքներին՝ նախնիներից ժառանգած ավանդույթներն ու պարզամտերը շարունակ եղեխացիների ուղեկիցն են եղել:

1988թ. դարաբաղյան իրադարձությունները հայկական այս ինքնափողայակ համար ազգային ոգու պողոթնային առիթ հանդիսացան: Բնակիչների նախաձեռնությամբ վերանորոգվեց Սբ Աստվածածին եկեղեցին: Համայնքը հոգաց նաև սեփական քահանա ունենալու խնդիրը և մի պատանի ուղարկեց Գևորգյան ճեմարան, որն ավարտելով վերադարձավ հայրենի գյուղ: Այժմ Տեր Խաչատուրը հովվություն է անում



Եղեխիայի Տեր Խաչատուր քահանան



Սեդա Մուրադյանը 2002թ.-ից աշխատում է Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի լրատվական ծրագրերի բաժնում, որպես լրատվական ծրագրերի պատասխանատու: Մինչ այդ 6 տարի աշխատել է «Ա1+» հեռուստաընկերությունում, որպես «Այբ-Ֆե» լրատվական ծրագրի թղթակից, խմբագիր: Ս. Մուրադյանը ավարտել է Երևանի Մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրության բաժինը: Հեռուստալրագրություն ուսումնասիրել է Հոլանդիայի «Ռադիո Նեդերլանդ» թրեյնինգ սենթր-ի բարձրագույն կուրսերում: Վաշինգտոնում /ԱՄՆ / տեղակայված «Արևմտյան կոնսուլ» կազմակերպությունում 2003թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին կատարել է հետազոտական աշխատանք՝ «Իրաքյան պատերազմի լուսաբանումը ամերիկյան լրատվամիջոցների կողմից»:

ՄՏՆՏՈՒ ՄԱՅՐ՝ ԱՆԱՊԱ

«Անապա» թուրքերենից թարգմանաբար նշանակում է «ստնտու մայր»: Այս տարբերակը Անապա քաղաքի անվան բացատրություններից մեկն է: Մեր հայրենակիցներից շատերի համար Անապան իսկապես կարող է համարվել «ստնտու մայր»:

«Սասինսկի վ տեստե, վարյոնի կուկու-ռուզ, խալոդնի պիվա, դամաշնի վինո...», - ընդգծված հայկական առոգանությամբ բարձրաձայն հնչող այս ճաշացուցակը առավոտից երեկո լսվում է Անապայի ծովափերին: Գաշացուցակն ավելի հարուստ է հայերը Ան ծովի ափին հանգստացողներին առաջարկում են նաև «դամաշնի պիրաժկի, չուչխելա, վորլա» և այլն: Հայաստանի տարբեր վայրերից ժամանած և ծովափնյա այս բիզնեսով զբաղվող հայերի մեծ մասը անմիջապես խոսակցության է բռնվում հանդիպող առաջին իսկ հայի հետ, և եթե փորձում են ինչ-որ բան գնել, ապա հրաժարվում է գումար վերցնել, կամ էլ 20 ռուբլի արժեցող «կուկուռուզը» վաճառում 15-ով: Առաջին հարցը, որ տալիս են Անապայի հայերը և՛ տարօրինակ է, և՛ խորհրդանշական՝ ի՞նչ եղանակ է Հայաստանում: «Եղանակ» բառն այս դեպքում «եղանակի տեսության» հետ կապ չունի: Այն կրում է Հայաստանի «վիճակի» մասին տեղեկություն ստանալու իմաստ: Տարբեր տարիքի հայ վաճառականներն ունեն արևից այրված մարմիններ ու տանջված տեսք. նրանք օրվա ընթացքում քայլում են տանյակ կիլոմետրեր, անընդհատ գործ ունենում ափերը հսկող ոստիկանների հետ: Վերջիններիս, բառիս բուն իմաստով իրենց քրտինքով վաստակած գումարից հայ վաճառականները 200 ռուբլի «նալոգ» են վճարում: 200 ռուբլին /մոտ 7.5 դոլար/ ոչ միայն ապահովում է նրանց հետագա աշխատանքը տվյալ ծովափում, այլև փրկում է Ռուսաստանից վտարվելուց, քանի որ վերջին տարիներին Անապա գաղթածների մի մասը չունի այդ երկրում աշխատելու իրավունք: Անապայի ծովափում աշխատող տղամարդկանց գերակշիռ մասը գումար է վաստակում շինարարական աշխատանքով: «Շատ հայեր գալիս են, գրանցվում որպես հանգստացողներ և աշխատում, ինչն, իհարկե, անօրինական է», - պարզաբանում է Անապայի հայ համայնքի ղեկավար Լևոն Ադամյանը: Այս քայլին դրդում է աշխատանքի թույլտվության բացակայությունը: Այն մեկ ամսվա համար մոտ 150 դոլար է /որը վճարում է գործատուն/: Իսկ մյուս դեպքում վճարում են անհամեմատ ավելի քիչ 75 ռուբլի 45 օրվա համար:

Խնդիր է նաև ժամանակավոր գրանցում ձեռք բերելը: Կիրովաբադից Հայաստան, այնուհետև Անապա գաղթած տիկին Ջուլիայի ամբողջ ընտանիքը, բացառությամբ դուստրերից մեկի, ունի օրինական գրանցում: Դստեր գրանցման համար նա բազմիցս է դիմել, սակայն անօգուտ: Գրանցման խնդրանքը մերժվում է առանց որևէ հիմնավորման: Սա եզակի դեպք է, արհեստական խոչընդոտների մասին շատերն են պատմում: Սակայն հայերի վիճակը Կրասնոդարում և Անապայում այսօր անհամեմատելի է ընդամենը երկու տարի առաջ տիրող իրավիճակի հետ: «Համեմատած Կրասնոդարի կամ Ադրբեջանի քաղաքացիների հետ, ռուսները հայերին ավելի հանդուրժող ու բարեկամաբար են վերաբերվում: Այսօր արդեն Կրասնոդարի նահանգապետը հայտարարում է, որ Կուբանի բնիկներն են ռուսները, հույները և հայերը: Մինչ այդ ասում էր,

որ միայն ռուսներն են: Իհարկե, լինում են ազգամիջյան բախումներ, սակայն այն իրավիճակը չէ, ինչպիսին եղել է մինչև 2000թ.», - ասում է Լևոն Ադամյանը: Նահանգապետի վերաբերմունքի այս «առաջընթացն», իհարկե, միջպետական համաձայնության արդյունք է: Սակայն ռուս սահմանապահներին դա չի վերաբերում, նրանք շարունակում են ամեն հարմար առիթ օգտագործել «կողմնակի եկամուտ» ունենալու համար: Կրասնոդարի օդակայանում մի հայ երիտասարդի նրանք սպառնում էին վտարման կնիք դրոշմել անձնագրում: Այդ երիտասարդի գրանցման ժամկետը վերջացած էր եղել, ինչի համար նա տուգանք էր վճարել: Տղայի վատ ռուսերենն ու օրենքի չիմացությունը օգտագործելով, Կրասնոդարի օդակայանի աշխատակիցները պատրաստվում էին նրան զրկել 4 տարի Ռուսաստան մուտք գործելու իրավունքից: Նույն չվերթով Երևան էր մեկնում մի բավականին «հարուստ» տեսք ունեցող տղամարդ: Նա հուզված ու շփոթված երիտասարդին ասաց՝ իմացիր ինչքան են ուզում, ես կտամ: Թե որքան ուզեցին ռուս սահմանապահները, անհայտ մնաց, անհայտ մնաց նաև «բարերարի» ով լինելը: Մեր կարծ գրույցի ընթացքում նա ևս հաստատեց, որ իրավիճակը Կրասնոդարում բավականին փոխվել է, սակայն միևնույն է, «մեզ որպես երկրորդ-երրորդ սորտ են ընդունում»: Այս խոսքերը համոզիչ են դառնում օդակայանում հայերին հետևելիս: Թե ինչպես են նրանք անցնում ստուգման բոլոր փուլերը՝ անհանգիստ, լարված, նյարդային ու փոքր-ինչ խեղճացած: Նրանք դիմանում են օդակայանի աշխատակիցների կոպիտ ու գրեթե արհամարհական ցուցումներին, անհանդուրժող ու քամահրական վերաբերմունքին: Այդ վերաբերմունքը ուղիղ համեմատական է ուղևորի արտաքին տեսքին. կոստյումավորների հետ ավելի նրբանկատ ու կիրթ են վարվում: «Իհարկե, հայերն էլ են մեղավոր», վրդովված շարունակում է վերը նշված տղամարդը. «Մենք չենք սովորում այս երկրի օրենքները, խախտում դրանք, հետո դժգոհում, որ մեզ չեն սիրում»:

Ըստ պաշտոնական տվյալների, Անապայում բնակվում է 16 000 հայ: Ոչ պաշտոնական տվյալներով, այդ թիվը մոտ 20 000 է: Հայերն ամենուր են՝ շուկայում, խանութներում, տնօրինում են բազմաթիվ բիզնեսներ: Ամենուր է նաև հայկական երաժշտությունը, ի դեմս Արամ Ասատրյանի և այլ նմանատիպ երգիչների երգացանկի: Հայերի ձեռնարկատիրական գործունեությունը երբեմն նյարդայնացնում է այդ երկրի տերերին՝ ռուսներին: Տաքսիստ Շուրան օրինակ, /որի մայրն, ի դեպ, հայ է/, թեև ասում էր, որ հայերին լավ է վերաբերվում, բայց չզհիտես ինչու վրդովվում էր, որ ամեն ինչ հայերի ձեռքում է, որ հայերը ռեստորաններ ունեն, հյուրանոցներ, շենքեր են կառուցում, հարստանում: Ամենադժվարը, թերևս, այս վերաբերմունքը հաղթահարելն է: Այդ պատճառով էլ օդակայանում հերթական կոպիտ վերաբերմունքից հետո մի հայ տիկին բարձրաձայն դիմեց իր հայրենակիցներին. սա թող մեզ դաս լինի, որ օտար հողերը թողնենք, մեր երկիր գնանք: «Որ մեր երկրում երեխաներս կուշտ լինեն, կգնան», - հետևեց կտրուկ պատասխանը:

ՍԵՂԱ ՍՈՒՐԱԳՅԱԼ
Անապա
«Այբ-Ֆե», N 30, 8-14 հոկտեմբերի, 2004թ.

ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԴԴԵՄ ՈՒԾԱՑՄԱՆ

Անապայի հայ համայնքը աստիճանաբար մոռանում է հայերենը, բավական է հայերեն դիմել, օրինակ՝ Անապայի Հայկաժող գյուղի հայ երեխաներին: Պատասխան կամ ընդհանրապես չի հնչում, կամ էլ լավագույն դեպքում հնչում է ռուսերենով:

համոզական աշխատանք կատարելու ընթացքում բաժանվում է անվճար գրականություն՝ ռուսերենով: Որպես հակաբայլ, ըստ տեր Երեմիայի, հարկավոր է հայկական համայնքում անվճար բաժանել Հայկական առաքելական եկեղեցին քարոզող կրոնական գրականություն՝ նախ և առաջ ռուսերեն լեզվով: Իսկ այդպիսի գրականություն Անապայում չկա: «Ցավոք դեռ այնպիսի հավատք չկա մեր մեծահարուստների մոտ, որ հովանավորեն ու նախաձեռնեն կրոնական գրականության տպագրում: Ցավոք, չկան մարդիկ, որ ասեն՝ այս գրականությունը իմ կողմից թող բաժանվի ժողովրդին»: Առայժմ մնում է ապավինել միայն Էջմիածնի օգնությանը և տեր Երեմիայի միակ խնդրանքը Էջմիածնից՝ գրականության տրամադրումն է: Աղանդավորական շարժումների հետ պայքարը դժվարանում է նաև Անապայում հայ հոգևորականների փոքրաթիվ լինելու պատճառով: «Ոմանք միգրացիոն մեղադրանք են դրել, որ մենք լավ չենք աշխատում մեր ժողովրդի հետ: Բայց մի քանի հոգին չեն կարող աշխատել մոտ 20 000 հայերի հետ: Իսկ աղանդավորական շարժումները ամեն փողոց 2-3 հոգի քարոզիչ են ուղարկում»: Այնուամենայնիվ, ըստ տեր Երեմիայի, Անապայի հայկական համայնքի հոգևոր վիճակը «վերելք» է սպրում՝ համեմատած 10-11 տարի առաջ տիրող վիճակի հետ: Այսօր Անապայի շրջանում կա երկու մատուռ՝ Սուրբ Սամվել և Սուրբ Սարգիս, որ կառուցվել են 90 ականների կեսերին: Այստեղ են անցկացվում եկեղեցական բոլոր արարողությունները: Սկզբում մատուռներ այցելողները փոքրաթիվ էին, անստորոջան պատճառով, իսկ հիմա, ըստ տեր Երեմիայի, տարեցտարի աճում է հավատացյալների քանակը: Ճիշտ է, այնպես չի, ինչպես կցանկանայինք, խոստովանում է տեր Երեմիան ու հույս հայտնում, որ Անապայում հայկական առաքելական եկեղեցու կառուցումից հետո հայ համայնքի շրջանում եկեղեցին ու հոգևոր կյանքը կդառնան ավելի կարևոր: Իսկ եկեղեցի կառուցվելու է համայնքի ուժերով: Առայժմ համայնքի ղեկավարները դժվարանում են ժամկետներ նշել: Եկեղեցու շուրջ են կենտրոնանալու հայկական համայնքի բոլոր մշակութային, կրթական ու սպորտային կառույցները: Հողատարածքն արդեն հատկացված է՝ տարիների բանակցություններից հետո: Կառուցումը սկսելու համար խանգարում են ստեղծված մի շարք արհեստական խոչընդոտներ, ասում է Լևոն Ադամյանը ու հույս հայտնում, որ շինարարական աշխատանքները հնարավոր կլինի սկսել հաջորդ տարի:

ՍԵՂԱ ՍՈՒՐԱԳՅԱԼ
«Այբ-Ֆե», N 31,
15-21 հոկտեմբերի, 2004թ.





Виктор Солахян физик-теоретик, публицист. Как физик печатался научных журналах. Автор книги "Жизнь подвиг" (2004г.) о выдающемся скульпторе и народном мстителе Ара Сарксяне. 1990г. был избран депутатом Ергорсовета. С 1996г. работает в Управлении миграции и беженцев при Правительстве РА гл. специалистом отд. разработки миграционной политики. Является вице-председателем общественной организации "Центр развития гражданского общества" и членом правления землячества "Амшен", экспертом Института региональной безопасности Южного Кавказа (Тбилиси), член рабочей группы "Урегулирование и предупреждение конфликтов в странах СНГ".

Во время войны в Абхазии в 1992-1993гг. многие жители Абхазии армянского происхождения вынуждены были покинуть родные очаги и нашли временный приют в других близлежащих регионах, в основном в Краснодарском крае Российской Федерации, а около 11 тысяч человек приехало в Армению.

У большинства из них в ходе военных действий дома и хозяйства были разграблены, а у многих дома были вообще разрушены, у некоторых погибли родственники.

За прошедшие годы значительная часть прибывших в Армению вынужденных переселенцев из Абхазии по мере стабилизации ситуации вернулась к родным очагам, другая часть обосновалась в Армении и, получив гражданство

возможности не только вернуться на свою родину, но даже поехать туда ненадолго, например, в случае кончины близкого родственника.

Дело в том, что Армения и Абхазия не имеют общей сухопутной границы, а гражданские аэропорты Абхазии с 1992 года не функционируют. Поэтому добраться до Абхазии они могут только транзитом через территорию Грузии или России. Транзит через территорию Грузии хотя теоретически возможен, но практически неприемлем. Согласно грузинскому законодательству въезд лиц с подобными устаревшими паспортами на территорию Грузии разрешен, но запрещен выезд. По закону эти граждане, въехав на территорию Грузии, должны обменять эти паспорта на новые грузинские паспорта, после чего

ний к которым присоединились и Армения, и Россия. (На самом деле эта проблема возникла не в мае этого года, а гораздо раньше. Теперь она просто еще более осложнилась).

Как же разрешить эту, на первый взгляд неразрешимую проблему? Есть по крайней мере два пути ее решения:

